

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն՝ օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության Հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Հ. Մարգարյան	Առաջարկվում է. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետի «հիման վրա» բառերից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Աճուրդով վաճառվող հողամասերի նախկին բարեխիղճ վարձակալներն իրենց կողմից վարձակալած հողի աճուրդին մասնակցելու ժամանակ ստանում են նախապատվության իրավունք»: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «գործառնական նշանակությունը» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «օտարման եղանակները» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշանը և նախադասությունը շարունակել հետևյալ բովանդակությամբ. «աճուրդին նախապատվության իրավունքով մասնակցող անձանց տվյալները»:	Չի ընդունվել	Առաջարկությունները չեն ընդունվել՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածների, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 68-րդ հոդվածի 8-րդ մասի, 72-րդ հոդվածի, 78-րդ հոդվածի 7-րդ մասի, 85-րդ, 87-րդ և 96-րդ հոդվածներով սպառնիչ կարգավորված են հողամասի նկատմամբ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ հողամասի օգտագործման տրամադրման, ինչպես նաև օտարման ժամանակ նախապատվության իրավունքի հետ կապված հարցերը: Այդ առումով, գտնում ենք, որ նախապատվության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները չեն հանդիսանում ներկայացված նախագծերի կարգավորման առարկան: